

# ՅՈՒՇ... ՈՐ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅ «ԱՐՁԱՆ»...

Ինչու՞նք չորս տարիները մնացած են ետև արդեն, երբ թրքական եպիսկոպոսական մագապործ ազատած կիսամեծ հայ տարաբախտ բեկորներն հասան Սուրիոյ ա-նապատները, գրեթե մերկ, անօթի, անօթեան, ուր անոնք ընդունուեցան գրկաբաց՝ արաբ ազ-նի ժողովուրդին կողմէ:

Տէր Զօրի տաք աւազներուն վրայ հագի հագ շնչել է եւ կենդանութիւն գտնել է ետք, թրքական ջարդ ու կոտորածներէն սարսափած տարագիր հայորդիներ, ենթարկուելով ճակատագրի պարտադրանքին, ուղղուեցան Արաբա-կան Աշխարհի գանգազան երկիրները, ուր «ձե-տով մը» հաստատեցին բնակութիւն, եւ ուր ար-աբ ժողովուրդը ամենայն սիրով ու առանց նա-խապաշարումի եւ վերապահութեան իր «հաճա-պագորեան հացը» կիսեց հայ գաղթականնե-րուն հետ, եղբայրանալով հայուն հետ:

Այլ խօսքով, դարե՛ր շարունակ վայելել է ետք թրքական անհասման «չարիք»-ը, հայ որբն ու որբեւայրին, հայ տնակն ու անօթեա-նը գտաւ արաբական անկեղծ ու թափանցիկ եւ նամանաւոր մարդկային «բարիք»-ը, Սուրիոյ, Լիբանանի, Իրաքի, Յորդանանի, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ, վայելելով արաբ ասպնջական ժողովուրդին սէրն ու գորգորանքը, մարդկայ-նութիւնը, այլասիրութիւնը եւ հանդուրժողու-թիւնը:

Այո՛, ինչու՞նք չորս տարիներ մնացած են ե-տև աչսօր: Մեր մեծ հայրերն ու մեծ մայրերը անցած են մահուան ճանապարհներէն եւ շնոր-հի վերեւ յիշատակուած արաբ պետութիւններու ընձեռած բարեացակամութեան, ժամանակի ընթացքին անոնք՝ մեր նախորդները ունեցած են իրենց գլխավերեւ կապոյտ երկիւնք, դար-ձած են տուն ու տե՛ղ, դարձած են ընտանի՛ք, հիմնած են դպրոց ու եկեղեցի, ակումբ ու միու-թիւն, եւ օր մըն ալ դարձած՝ գաղութ ու հա-մայնք, համահասարակ իրաւունքներ վայելելով ասպնջական այս երկիրներու ժողովուրդներուն հետ, դառնալով լիիրաւ քաղաքացիները, պատ-կանած երկիրներուն:..

Արդե՛օք կարելի է մոռնալ պատմութիւնը: Արդե՛օք կարելի է մոռնալ մօտիկ անցեալը: Արդե՛օք կարելի է մոռնալ մեր ապրած երկիւ-ն անհուն ցան ու ծով տառապանքը:.. Երբե՛ք: Բայց, կարելի չէ մոռնալ նաե՛ւ՝ մեր վայելած ու ապրած բարիքը:..

Երկի գաղթական ու անօթեան հայուն շա-նախորդ, այսօր կ'ապրի ու կը վայելէ բոլոր բա-րիքները Միջին Արեւելքի արաբական երկիրնե-րուն, ուր բարեբախտ իրողութեամբ, ամէն հայ տունէ ներս կը լսուի հայերէն երգ ու խօսք, ա-մէն հայ եկեղեցիէ ներս կ'երգուի հայերէն շա-րական, ամէն հայ դպրոցէ ներս կը հնչէ Մես-րոպի շունչը՝ ազատ ու խաղաղ պայմաններու մէջ, հպարտութիւն ներշնչելով բոլորիս:

Իսկ ամէն մէկ աշխատատեղ հայ, շնորհի իր աշխատասիրութեան, կամքին ու ձեռներեցու-թեան, ունեցաւ սեփական տուն ու խանութ, գրասենեակ ու գործարան, դիրք ու պաշտօն, գնահատուելով բոլորէն եւ պատիւ բերելով իր պատկանած համայնքին կամ ազգութեան, երբեմն գերազանցելով տեղացիներն անգամ:..

Անշուշտ այս բոլորը, շնորհի մեզի ընձայ-ւած ազատութեան, բարիքին եւ արաբ ժողո-վուրդի ցուցաբերած ազնի ու անխտրական վերաբերմունքին ու նկարագրին, որուն համար միայն ու միայն շնորհակալ ու երախտապարտ կրնար մնալ հայը՝ ինչու՞նք չորս տարիներ շա-րունակ:..


Բարեբախտութիւն է, որ վերջերս խումբ մը Սուրիահայեր, գիտակցելով այս երեւոյթի կա-րեւորութեան, նախ մտածած, ապա գործադ-րելու որոշում մը առած են, մարմնաւորելու համար իրենց զգացումները, գորս մկրտած են մէկ բառով՝ «Երախտագիտութիւն»... յայտնելու համար իրենց տարիներու կուտակուած զգա-ցումը, սէրը, համակրանքը եւ վերաբերմունքը՝ հանդէպ Արաբ Մեծ Ժողովուրդին, որուն որ-քան պարտական են մեր նախահայրերը, եւ նաեւ մենք՝ այդ սերունդներուն ժառանգորդ-ները:

Արդարեւ, շնորհակալութեան ու երախտագի-տութեան այս հաղորդական ջերմութիւնը այսօր բնական մտածողութեամբ դուրս եկած է Սու-րիոյ սահմաններէն եւ իր մէջ կ'ընդգրկէ բոլոր հայերու զգացումները անշուշտ, որոնք անցան արաբական այս նուիրական հողերէն ու բարի ասպնջներէն, եւ մեկնեցան հեռու-հեռուներ, վայե-լել է ետք այս հողերուն ընձայած բարիքները, սակայն իրենց անմոռանալի յիշատակները եւ երախտագիտութիւնը տանելով իրենց հետ մինչեւ հեռաւոր երրոպաներ, ամբիկաներ կամ՝ աստորալիաներ, բայց միշտ յիշելով անցեալի մշուշոտ օրերուն համն ու հոտը:..

Վարդ, շատ մօտիկ ապագային, հաւանաբար գալ ամիս գուրց, Հայաստանի մայր հողին վրայ, հայոց հարազատ մայրաքաղաք Երեւանի սրտին վրայ բարձրանալ «սէրերու, զգացումնե-

րու եւ երախտագիտութեան» կուտակումը՝ «Ե-ՐԱՆՍՏԻՔԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ»-ը, տասներկու մեթր բարձրութեամբ, հաղորդելու համար սփիւռա-հայ զանգուածներուն անհուն շնորհակալու-թիւնը, հանդէպ արաբ եղբայրներուն, արաբ ժողովուրդներուն եւ արաբ պետութիւններուն, որոնց հետ ապրեցանք, կ'ապրինք, կը շնչենք, կ'ուրախանանք ու կը տխրինք, պահանջեալ հարկին միասին կուրծք տալով արտաքին թշնամիներու:

«ԵՐԱՆՍՏԻՔԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ»-ը անշուշտ թէ իր գեղարուեստական երկնաւայաց տեսքին ու նիւթական գոյութեան կողքին, ունի իր բարոյա-կան դիմագիծը:.. Անկիւս, բառացիօրէն կը մարմ-նաւորէ երկնայ ջարդուած ու կոտորակուած հայուն մնացորդացին բարի կամեցողութիւնը, որ հակառակ թրքական եպիսկոպոսի վճիռին, ապրեցաւ, ինքզինք վերագտաւ ու իր գոյութիւ-նը շարունակեց արաբական հիւրընկալ երկիր-ներու մէջ, առանց ենթարկուելու խտրականու-թեան:



Այսօր, իր ճակատագրի ամենադառն ու դժբախտ թուականէն ետք, ան՝ հայ ժողովուր-դը, աղաղակող արձագանգով կուգայ իր վաե-րական խօսքը բուելու արաբ պետութիւններուն, ժողովուրդներուն, թէ հա՛յը, իր չորս հազարամե-տայ պատմութեան մէջ մնացած է միշտ աշխա-տատել, շինարար, նորարար եւ ո՛ր որ գացած է իր ջանքն ու քրտինքը թափած է ապրած երկիրներու բարօրութեան ի խնդիր, ու միշտ պահած երախտը իսօքը՝ իր սրտին ու հոգիին խորը՝ անջնջելիօրէն:..

Իսկ այսօր, «ԵՐԱՆՍՏԻՔԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ»-ին Երեւանի սրտին վրայ բարձրանալը, անգամ մը եւս ցոյց պիտի տայ մեր խորունկ երախտին ու արտայայտութեան փաստը՝ ուր, ամէն Հա-յաստան հասնող կամ մեկնող ճամբորդ, ըլլալ ան պարզ քաղաքացի կամ դիւանագետ, ի՛նչ ազգի ալ պատկանած ըլլալ, հետաքրքրու-թեամբ ու ուշադրութեամբ պիտի տեսնէ երկ-նաւայց յուշակոթողը, որ խառցումն է հազա-րաւոր սփիւռքահայերու «սիրոյն, շնորհակա-լութեան եւ երախտագիտութեան», որուն մէկ անբաժան մասնիկն են ե՛ս, դո՛ւն, ա՛ն... այլ խօսքով՝ բոլորս:

Յուշարձանը, այսօր, որպէս խօսուն վկայ, ինչու՞նք չորս տարիներ ետք կենքի կը կոչուի, որպէսզի յետագայ սերունդներ չմոռնան իրենց արմատները, դեղին ու կիզիչ անապատը եւ հիւրընկալ ու ասպնջական արաբ բարի ժողո-վուրդը:..

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

## Ընտրական Լուրեր

### ՖԱՐՈՆ. ԳՅԱՎԱՆ ԶԱՆՊՅՅԸ ԿԸ ԼՈՒՄՈՒԻ ՇՈՒՏՈՎ

Շ Երեսփոխան Միշէլ Ֆարոն նախատեսեց, որ «ընդհիմունքները շարունակէ խոչընդոտներ գետնէն, անհամաձայնութեան մթնոլորտ խարը-խելու համար կառավարութենէն ներս թէ անկէ դուրս»:

Յայտարարութիւն մը կատարելով նախկին նախարարը նաեւ ըսաւ, թէ «Պէրթի առաջին ընտրաշրջանին մէջ հայ կաթողիկէ աթոռին հան-գոյցը կը գտնուի լուծումի ճամբուն վրայ»:

Մայրաքաղաքի երրորդ նստաշրջանին մէջ ընդհիմադիր ուժերու մամլոյ գրասենեակը յայտ-նեց, թէ այդ ընտրաշրջանին մէջ ընդհիմունքեան ուժերը իրենց ընտրացանկը պիտի յայտարարեն յառաջիկայ Կիրակի, 17 Մայիսին, Ռաուշէի «Սա-ֆիր» պալատին մէջ, շարք մը անձնաւորութիւն-ներու ներկայութեամբ:

Ալէյի ընտրաշրջանին մէջ 14 Մարտի ըն-տրացանկի անդամներ Աբրամ Ըրիայեպ, Գանրի Գելու, Ֆուատ Սաստ եւ Ֆետի Զայր, կրօնա-կան առաջնորդներուն իրենց այցելութիւնները շարունակելով, հանդիպում մը ունեցան յոյս կա-թողիկէներու Պէրթի առաջնորդ, Եուսէֆ Զալ-լաս եպիսկոպոսին հետ, միասնաբար քննարկե-լով ընտրական գործընթացին զարգացումները:

Նախկին նախարար, Երեսփոխանութեան

## Հայրենական Կեանք

# ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ Ա.Դ.Յ.Կ. ԶԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ԼՈՒՏԱԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅԵՏ

Երեւանի աւագանու ընտրութիւններում Հայ Ազգային Գոնկրեսի՝ Նոր Նորք համայնքի նա-խընտրական շտաբների գործունեութեան վե-րահսկողութիւնը վերապահուած է Սոցիալ-Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեանը՝ ի դէմս Նոր Նորքի շտաբի պետ, Ա.Դ.Յ.Կ. վարչու-թեան անդամ Գուրգէն Եղիազարեանի: Մեր գրուցակիցը Ա.Դ.Յ.Կ. տեսնապետ Լուտմիլա Սարգսեանն է:

Պիտի արձանագրեմ, որ նախագահական ընտրութիւններից առաջ այս համայնքում շատ լուրջ թիւմ չէր ձեւաւորուել, այդ պատճառով էլ աշխատանքները այնքան կորոզիւցանուած էլ լաւ արդիւնք չտուեցին, ինչքան որ ակնկալուե-ր: Միջնորդ մայրաքաղաքի գործունեու-թիւնը շատ լուրջ թիւմ է ձեւաւորուել. Նորքի բո-լոր գանգուածներում ՀԱԿ-ն ունի շտաբներ, որտեղ տիրում է նախընտրական ակտիւ տու-զեմ, ամբողջ օրը մարդիկ ակտիւ ելումուտ են անում մեր գրասենեակներ, ընդ որում՝ ոչ միայն ՀԱԿ-ին անդամագրուածները, այլեւ շարքային քաղաքացիներ, որոնք խիստ դժգոհ են երկրի կառավարչի ներքին անօրինական գործունեու-թիւնից, ովքեր ակնկալում են իրենց քաղաքում փոփոխութիւններ արձանագրել ընտրութիւն-ների միջոցով ու այդ հարցում անվերապահ վստահում են ՀԱԿ-ին: Ինձ շատ գոհացում է նախընտրական այն իրավիճակը, որն առկայ է Նոր Նորքում, սակայն մենք քաղաքացիների նախընտրական ռզեւորութիւնը էլ անելի բարձր աստիճանի հասցնելու կարիք ունենք, որի դէպ-քում այդ համայնքում ՀԱԿ-ը բաւական բարձր ցուցանիշ ապահովելու մեծ շանսեր ունի:

Իսկ ինչպիսի՞նք է Ձեր գնահատմամբ, ՀԱԿ-ի քարոզարշաւի ընթացքը: Տպաւորութիւն է, թէ ընտրաշրջաւը սպասուածից պատշաճ է:

Այն վախի մթնոլորտը, որը փորձում են ձեւաւորել իշխանութիւնները տարբեր մեթոդ-ներով, բնականաբար որոշակի ազդեցութիւն թողնում է քաղաքացիների ակտիւութեան վրայ: Մենք Նորք-Մարաշում ակնատես եղանք, թէ ինչ լուրջ աշխատանք էին տարել իշխանու-թիւնները, որպէսզի հնարաւորինս քիչ մարդիկ ներկայանան նախընտրական հանդիպանք, եւ ստեղծուի մի վիճակ, թէ իբր մենք այդ հա-մայնքում չունենք համակիրներ: Իրականում, սակայն, մարդիկ, որոնց վրայ իշխանական տեռորը բացարձակ չի ազդում, եկել էին հան-դիպման, եւ մենք գիտեցք, որ Երեւանի բոլոր համայնքներում, այդ թւում եւ Նորք-Մարաշում, մենք բազմաթիւ համակիրներ ունենք: Դա ան-վիճելի է եւ իշխանական ռեպրեսիաները դրա դէմ ոչ մի բան անել չեն կարող: Ինչ վերաբե-րում է քարոզարշաւի ընդհանուր ընթացքին, ապա այն բազմամարդութեան, խանդավառ-ածուութեան, ռզեւորութեան առումով անդու-րկան է: Դաւիթաշէնում տեղի ունեցած նախընտ-րական հանդիպման փաստն արդէն իսկ յու-շում է, որ օրի ակտիւանում է Երեւանցին եւ միջեւ Մայիսի 31-ը ՀԱԿ-ն իր ընտրաշրջաւի մի-ջոցով կարողանալու է հասնել ընտրողների մաքսիմալ ակտիւութեան: Ես այն համոզումն ունեմ, որ ՀԱԿ-ի ընտրութիւնների մասնակցու-թեան փաստը գրեթէ անհնար է դարձնում միւս քաղաքական ուժերի յաղթելու հնարաւորու-թիւնները: Եթէ ի հարկէ, ընտրութիւններն անց-նեն արդար ու թափանցիկ, ոչ թէ բացայայտ տեռորի ու տոտալ կեղծիքների պայմաննե-րում, ինչպէս նախորդ՝ նախագահական ընտ-րութիւնների դէպքում էր: Իսկ եթէ գործի նոյն ձեռագիրը, մենք եւս պատրաստ ենք ամեն ինչ անել՝ մեր ջունքները պահպանելու համար:

Մասնաւորապէս ի՞նչ մեթոդներ էք գործի դնելու, ի՞նչ գործողութիւնների միջոցով էք տեր

կանգնելու ձեր ձայներին: = Համագործակցութիւն ընտրութիւնների ընթացքը վերահսկող, դիտարկող կազմակեր-պութիւնների հետ, ընտրակեղծիքների օպե-րատիւ արձանագրում, նաեւ՝ ըստ իրավիճակի կը դիմենք կոնկրետ գործողութիւնների:



Ինչպէս նա-խորդ նախագա-հական, այնպէս էլ այս ընտրու-թիւնների ժամա-նակ արդէն իսկ նկատելի են իշ-խանութիւնների բիրտ միջամը-տ ու թիւնները նախընտրական պրոցեսին՝ ծեծ-ումն է այլ բռնու-թիւնների եւ են-թարկումն ընդ-դիմութեան ակ-տիւ իւր ստերը:

Ի՞նչ երաշխիք, որ բուն ընտրական պրոցեսի ժամանակ էլ նոյն ձեռագիրը չի գործելու, եւ իշխանութիւններն էլ ի բռնուցքի ուժով յաղթե-լու են:

= Այդ բռնութիւնները խօսում են մի բանի մասին՝ իշխանութիւնները վստահ չեն իրենց յաղթանակի վրայ, ուստի եւ կիրառում են բո-լոր հնարաւոր մեթոտները՝ ոստիկանական մահակ, բռնուցք, որպէսզի պատիւ մասնակ-ցութիւն լինի ընտրութիւններին, որովհետեւ պատիւ մասնակցութեան դէպքում անելի է մե-ծանում ընտրակեղծիքներ իրականացնելու հնարաւորութիւնը: Իսկ մենք խնդիր ունենք ամեն գնով ակտիւացնել ու հասկացնել Երե-ւանցի ընտրողին, որ միայն իր ակտիւութեամբ է հնարաւոր լինելու բռնել ընտրակեղծիք իրա-կանացնողների ձեռքն ու թոյլ չտալ վերջինիս իրացնել իշխանութեան հերթական օրակը:

Մայիսի 15-ին սպասուող համապետական հանրահաւաք թեման ո՞րն է լինելու: Հնարա-ւոր է, որ այդ օրը ազարարուի քարոզարշաւի Նոր, անելի ակտիւ փուլի մեկնարկի մասին:

= Ես ձեռնպահ կը մնամ նախօրոք խօսել հանրահաւաքի օրակարգի մասին, բայց կար-ծում եմ, որ հիմնական «մէտը» անխուսափե-լիօրէն լինելու է առաջիկայ ընտրութիւնները, սպասուելիք զարգացումները, նաեւ՝ աշխար-հաքաղաքական ներկայ գործընթացները: Այդ հանրահաւաքի միջոցով եւս մէկ անգամ հա-սարակութեանը հասնու կը դարձուի մի պարզ ճշմարտութիւն, այս երկրի ցակցած քաղա-քացի պետք է գիտակցի իր անձի կարեւորու-թիւնը երկրի կառավարման գործընթացում:

Այդ հանրահաւաքին իրենց մասնակցութիւնն ապահովող մեր համաքաղաքացիները եւս մէկ անգամ կը համոզուեն, որ Համաժողովրդա-կան շարժումը մէկուկէս տարուայ ընթացքում կարողացել է օր օրի հզօրանալ, դառնալ իշ-խանութիւններին ռեալ հակակշիռ եւ այլ այլ-ընտրաւեք, քան՝ յաղթանակը չունի: Իսկ ա-ւագանու ընտրութիւնները շատ կարեւոր, կեն-սական նշանակութիւն ունեցող քայլ են այդ յաղթանակի ճանապարհին: Այդ ընտրութիւն-ներում մեր անվերապահ յաղթանակը կը լինի երկրում սահմանադրական կարգը վերականգ-նելու ՀԱԿ-ի առաքելութեան առաջին փուլը, ինչին կը հետեւին երկրի առողջացմանն ուղ-ղուած միւս գործողութիւնները եւ երկիրը շատ արագ կը կանգնի իշխանափոխութեան փա-ստի առաջ:

## ՀԱՐԱՄՅԻՆ ԼԻՐԱՆԱԿ

Նապաթիի ընտրաշրջանին մէջ շիիթ ա-թոռի թեկնածու Մաժտ Սեմիի Ֆայետա դիտել տուաւ, թէ «հարաւի մէջ քաղաքական պայքարը մէկ մասնիկն է քաղաքական երկու հասկացո-ղութիւններու միջեւ ճակատումին»:

Դարձեալ Նապաթիի ընտրաշրջանին մէջ նոյն աթոռի թեկնածու Նետիմ Օսէրյան, իր ընտ-րամեքենայի անդամներուն հետ գումարուած ժողովի մը ընթացքին, շեշտեց թէ անհրաժեշտ է «ընտրել ամենէն ատակ թեկնածուն, որ կ'ա-խտի հայրենիքի շահերուն ի խնդիր»: Ան դրուատեց «պահովութեան ուժերուն դերա-կատարութիւնը լրտեսական ցանցերը քոչա-գրծելու եւ անոնց անդամները ձերբակալելու մէջ»:

## ՊԵՅՐՈՒԹ

Մայրաքաղաքի առաջին ընտրաշրջանին մէջ յոյն օրթոտոքս աթոռի թեկնածու Նէյա Թուէ-նի հանդիպում մը ունեցաւ «Սուրիանի համա-դաշնակցութիւն» կուսակցութեան պետ Իպրա-հիմ Մըրատին հետ, քաղաքական գրասենեակի անդամներուն ներկայութեամբ:

## ՊԵՅՐՈՒԹ

Մայրաքաղաքի առաջին ընտրաշրջանին մէջ յոյն օրթոտոքս աթոռի թեկնածու Նէյա Թուէ-նի հանդիպում մը ունեցաւ «Սուրիանի համա-դաշնակցութիւն» կուսակցութեան պետ Իպրա-հիմ Մըրատին հետ, քաղաքական գրասենեակի անդամներուն ներկայութեամբ:

## ԼԵՆՆԱԿԱՆԱԿ

Մեթիի ընտրաշրջանին մէջ թեկնածու, նախ-